# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՇԵՆԻ ՌԱՋՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ IXա ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  ԹԻՎ 1

2017 թվականի սեպտեմբերի 6-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9Ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Գոհար Ղազարյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լիանա Տերյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը կազմակերպելու հարցը:
4. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին.

Դասղեկ Գոհար Ղազարյանի եզույթը, որը ներկայացրեց ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 9Ա դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով:
Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն.
1. Բաբայան Տաթևիկ Սահակի, ծնված 1983թ.
2. Եղիազարյան Շուշանար Սերժիկի, ծնված 1982թ.
3. Ավետիսյան Հռիփսիմե Վարուժանի, ծնված 1983թ.
4. Խաչիկյան Սիլվա Սումբատի, ծնված 1970թ.
5. Հովհաննիսյան Անժելա Մարտինի, ծնված 1979թ.

Նախագահի թեկնածու առաջադրվեց Տաթևիկ Բաբայանը, որից հետո կատարվեց քվեարկություն: 5 կողմ, 0 դեմ ձայնով Տաթևիկ Բաբայանը ընտրվեց նախագահ:

Որոշեցին.
9Ա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝
1. Բաբայան Տաթևիկ Սահակի /նախագահ/
2. Եղիազարյան Շուշանար Սերժիկի /անդամ/
3. Ավետիսյան Հռիփսիմե Վարուժանի /անդամ/
4. Խաչիկյան Սիլվա Սումբատի /անդամ/
5. Հովհաննիսյան Անժելա Մարտինի /անդամ/

2. Լսեցին.

Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ Գոհար Ղազարյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:

Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու հարցում: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ տետրեր /թեմատիկ, աշխատանքային, օրագրեր/, գրենական պիտույքներ, ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ տետրեր /աշխատանքային և թեմատիկ/, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը:

3. Լսեցին.

Ծնողազուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը, ժամանցը կազմակերպելու հարցը:

Դասղեկը ներկայացրեց, որ բոլոր դասարաններում էլ կան սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաներ, որոնց դպրոցի, համայնքապետարանի կողմից դասագրքերի, հագուստի համար օգնություն հաճախ տրամադրվում է: Սակայն ուսումնաօժանդակ նյութերի ձեռքբերման, էքսկուրսիաների, թանգարան, թատրոն այցելությունների ժամանակ անհրաժեշտ է ապահովել նման երեխաների ներկայությունը:

Դա շատ կարևոր է նման ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը կոլեկտիվին, ընկերների հետ շփումները ապահովելու և նրանց նորմալ հոգեբանական զարգացումը ապահովելու համար: Որոշակի գումարային ներդրումներով ավելի ապահով վիճակում գտնվող ծնողները կարող են իրենց երեխաների մոտ ապահովել հասակակիցների նկատմամբ ճիշտ, մարդկային հարաբերությունների ձևավորումը, հատկապես, որ դա ծնողական խորհրդի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակում է գտնվում:

Որոշեցին.

Տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել անապահով ընտանիքի երեխաներին:

4. Լսեցին

Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Գոհար Ղազարյանը նշեց, որ նոր ուսումնական տարում

դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով. Դասերը սկսվելու են $9^{00}$-ին, ավարտվելու են $15^{00}$-ին: Նադեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, օրագրերով և դպրոցական համազգեստով: Ներարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում: Պահել ծնող դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները՝ դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Բաբայան Տաթևիկ/

Քարտուղար՝ /Խաչիկյան Սիլվա/

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2017 թվականի նոյեմբերի 19-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9Ա դասարանի դաստիարակչական և ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Գոհար Ղազարյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լիանա Տերյանը և գերմաներենի ուսուցչուհի Հայկուհի Մանուկյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի աշակերտների հաճախումները:
2. Սովորողների վարքը դասերին և դասամիջոցներին:
3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, ներքապահություն/:

1. Լսեցին.

Դասղեկ Գոհար Ղազարյանի ելույթը, որը ներկայացրեց առաջին ծնողական ժողովից հետո դասարանում կատարված աշխատանքների մեկամսյա պատկերը՝ շեշտը դնելով աշակերտների հաճախումների ու վարքի վրա:

Նշվեց, որ այս մեկուկես ամսվա ընթացքում էական փոփոխություններ չեն կատարվել 9-րդ դասարանում աշակերտների ուսման առաջադիմության բարձրացման, կարգապահության ու հաճախումների հետ կապված:

Որոշեցին.

Հաճախակի դարձնել ծնողների այցը դպրոց, կատարել դասալսումներ, հետևել անկարգապահ աշակերտների վարքին և կրճատել անհարգելի բացակայությունների քանակը:

2.Լսեցին.

«Սովորողների վարքը դասերին և դասամիջոցներին» հարցը:
Այս հարցի շուրջ խոսեցին ավագները՝ ներկայացնելով կատարված իրական եղելությունները: Տեղի ունեցավ մտքերի ազատ փոխանակություն և առողջ քննադատություն:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն ժամանակին, աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ ու իրենց օրինակ ծառայեն իրենցից փոքրերի համար:

Ժողովի նախագահ՝ ------------ Տ. Բաբայան

Քարտուղար ------------ Ա. Խաչիկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2017 թվականի դեկտեմբերի 15-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9ա դասարանի դասարանական և ծնողական համատեղ ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր աշակերտները և ծնողները:

Ժողովը վարում էր դասղեկ Գոհար Ղազարյանը: Ներկա էին նաև տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Լիանա Տերյանը և մաթեմատիկայի ուսուցչուհի Թամարա Սամսոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքներին աշակերտների նախապատրաստվելը:
2. Դասարանի աշակերտների զբաղվածությունը դպրոցից դուրս:
3. Դասապատրաստման աշխատանքների տևողությունը և լրացուցիչ այլ աշխատանքների կատարում:
4. Ընթացիկ հարցեր՝ կապված Ամանորին նախապատրաստվելու, դասարանի տոնական զարդարման, արձակուրդների հետաքրքիր անցկացման հետ և այլն/:

1. Լսեցին.

Դասղեկ Գոհար Ղազարյանի ելույթը: Նա տեղեկացրեց, որ գալիք շաբաթվանից դպրոցում սկսվում են բոլոր առարկաներից կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքները, որոնք հաջողությամբ անցկացնելու և կիսամյակները դրական ու բարձր նիշերով փակելու համար պետք է լրջորեն նախապատրաստվել: Դրան պետք է օգնեն նաև ծնողները իրենց ամենօրյա հետևողական աշխատանքով, որովհետև առաջին կիսամյակի արդյունքներից կախված կլինի նրանց երկրորդ կիսամյակի դրական ցուցանիշը գալիք քննություններից առաջ: Տարեվերջին քննություն հանձնող դասարանը հենց այսօրվանից արդեն պիտի նախապատրաստվի այդ պատասխանատու քննաշրջանին:

Ելույթ ունեցողը ներկայացրեց նաև առաջին և երկրորդ ծնողական ժողովներից հետո աշակերտների ուսման առաջադիմության, հաճախումների եռամսյա պատկերը: Նշեց ուսման մեջ առաջադիմող և հետ մնացող աշակերտների անունները, նրանց վարքի, հերթապահության կատարման, երկու ավագների աշխատանքի, դասարանի ծնողական և աշակերտական խորհուրդների աշխատանքի համառոտ ամփոփագիրը:

Առաջարկվեց ուժեղացնել այդ ուղղությամբ կատարվող բոլոր աշխատանքների հսկողությունը ծնողների և դասղեկի կողմից:

2.Լսեցին.

Դասղեկի և ծնողական խորհրդի նախագահի ելույթները ա) «Դասարանի աշակերտների զբաղվածությունը դպրոցից դուրս» և բ) «Դասապատրաստման աշխատանքների տևողությունը ու լրացուցիչ այլ աշխատանքների կատարումը» հարցերի վերաբերյալ:

Երկուսն էլ հավաստեցին, որ սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում մեծ է ծնողների դերը երեխայի ուսման մեջ

այցելելու և դպրոցից դուրս նրա օրվա մնացած ժամերի զբաղվածությունը ճիշտ կազմակերպելու հարցում, որովհետև նրանց ամենօրյա անմիջական հսկողությունից և ծնողական պարտքի զգացումից է կախված աշակերտի ուսման նկատմամբ պատասխանատվությունը, օրվա ռեժիմի ճիշտ կարգավորումը: Պետք է փորձել միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության և ուսման հիմնախնդիրների հարցում:

Սխալ է, երբ միայն մայրն է ներկայանում ծնողական ժողովների ու պատասխանատվություն կրում իր երեխայի ուսման ու դաստիարակության, նրա՝ օրվա ընթացքում կատարած բոլոր գործողությունների համար: Այս տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքում ավելի շատ հայրերը պետք է հետաքրքրվեն ու զբաղվեն: Բացի դասապատրաստումից պետք է հետևել, որ երեխան կատարի լրացուցիչ հանձնարարություններ, զբաղվի հանրօգուտ աշխատանքով, գիրք կարդա և ժամանակ գտնի օգնելու ծնողին տնային գործերում:

Դասղեկը հորդորեց ծնողներին ճիշտ կազմակերպել երեխաների և՛ ազատ ժամանակի տնօրինումը, և՛ դասապատրաստման գործը, չէ՞ որ այդ ամբողջ ժամանակահատվածում նրանք գտնվում են ծնողների կողքին ու նրանց հսկողության տակ:

Կարևոր է նաև երեխաների հաճախակի այցելությունը մշակութային օջախներ՝ կրթական մակարդակը հարստացնելու և նոր մարդ ձևավորելու ընթացքը ճիշտ հիմքերի վրա դնելու համար:

3 Լսեցին

Ծնողական խորհրդի նախագահի, աշակերտական խորհրդի նախագահի և ավագների ելույթները Ամանորին նախապատրաստվելու, դասարանը տոնական զարդարման, արձակուրդների հետաքրքիր անցկացման մասին:

Որոշեցին

ա) Լավ նախապատրաստվել և հաջողությամբ ավարտել կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների գործընթացը: Առավել ուշադիր և հետևողական լինել բնական առարկաների նկատմամբ:

բ) Ուժեղացնել դասղեկի և ծնողների միասնական հսկողությունը երեխաների դասերից դուրս զբաղվածության և դասապատրաստվելու հարցում:

գ) Զարդարել դասասենյակը տոնականորեն և ձմեռային արձակուրդների օրերին ծնողական խորհրդի անդամների միջոցով կազմակերպել այցելություն Երևան՝ որևէ թատրոն կամ համերգասրահ տոնական միջոցառումներ դիտելու նպատակով:

Ժողովի նախագահ՝ ---- Տ. Բաբայան

Քարտուղար՝ ---- Ս. Խաչիկյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԹԻՎ4

2018 թվականի փետրվարի 8-ին տեղի ունեցավ 22 Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 9ա դասարանի դասղեկական և ծնողական համատեղ ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր աշակերտները և ծնողները:
Ժողովը վարում էր դասղեկ Գոհար Ղազարյանը:
Ներկա էին նաև քիմիայի ու մաթեմատիկայի ուսուցչուհիներ Լուիզա Աղաքարյանն ու Թամարա Սամոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում.

ա) ուսման առաջադիմությունը

բ) օրագրերի գործածությունը

գ) դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակը

դ) համազգեստը և նրա պահպանումը

ե) դասարանի սանիտարական վիճակը և գույքի պահպանումը

զ) հաճախումների արդյունքները

է) աշակերտների մասնակցությունը դպրոցական ու արտադպրոցական խմբակների պարապմունքների և օլիմպիադաների

ը) 2-րդ կիսամյակի անելիքները

2. Ընթացիկ հարցեր (միջոցառումների կազմակերպում, կարգապահություն, վարք և այլն):

Ա. Լսեցին՝

Օրակարգի առաջին հարցը, որի վերաբերյալ ելույթ ունեցավ դասղեկ Գոհար Ղազարյանը: Նա ամփոփ ներկայացրեց դասարանի 1-ին կիսամյակի արդյունքները: Դասարանի առաջադիմությունը 100 % է, ունեն 8 հարվածային աշակերտ՝ Առաքելյան Մարիամ, Ավետիսյան Նարեկ, Եղիազարյան Քրիստինե, Խաչատրյան Սուսաննա Սարգսի, Մնացականյան Մարիամ, Սարգսյան Գեղամ, Վարդանյան Մայրանուշ և Փանոսյան Տիգրան:

Աշակերտների բացակայությունը կազմում է 20 ժամ: 2 աշակերտ (Հովակիմյան Ջանիկ և Խաչատրյան Սուսաննա Հայկի) եփվեղացել են ցածածիկ նիվան-

ղությամբ և 3 շաբաթ բացակայել են դասերից բժշկի գիտությամբ: Այդ աշակերտների համար կազմակերպվել է տնային ուսուցում, և նրանք դպրոց են եկել բոլոր դասերին պատրաստ վիճակով: Անհարգելի բացակայություններ չեն եղել:

Դասղեկը հետևողական է եղել օրագրերի գործածության, հերթապահության, հաճախումների, դասագրքերի և աշխատանքային տետրերի վիճակի ստուգման, համազգեստի, նրա պահպանման, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանման հարցում: Պատժվել են նրանք, ովքեր կատարել են կարգապահական շեղումներ, փորձել են խանգարել կամ լքել դասերը: Անմիջապես տեղեկացվել է ծնողներին ամեն ինչի մասին և դասղեկ-ծնող համատեղ ջանքերով փորձել են հարթել ծագած խնդիրները: Դասարանի 10-15 աշակերտ 1-ին կիսամյակում մասնակցել են արտադասարանական և արտադպրոցական տարբեր խմբակների (սպորտային, երաժշտական, գրականության, կերպարվեստի, պարի և այլն) պարապմունքների դպրոցում, կուլտուրայի տանը, երաժշտական դպրոցում, Արմավիրում ու Երևանում, որոնք նպաստում է նրանց գիտելիքների հարստացմանը և կարողությունների ու հմտությունների բացահայտմանը:

Ծնողներին հիշեցվեց, որ 9-րդ դասարանը ավարտական ու քննական դասարան է: Լավ արդյունք ապահովելու համար պետք է լրջորեն նախապատրաստվել: Դրան պետք է օգնեն նաև ծնողներն իրենց ամենօրյա հետևողական աշխատանքով: Առաջին կիսամյակի արդյունքներից կախված կլինի նաև նրանց երկրորդ կիսամյակի որակական ցուցանիշը: Գալիք քննություններից առաջ անհրաժեշտ է որոշել, թե ընտրովի քննություններից որն են հանձնելու և վերջնական որոշում կայացնեն: Տարեվերջին քննություն հանձնող դասարանը հենց այսօրվանից արդեն պիտի նախապատրաստվի այդ պատասխանատու շրջանին:

Զեկուցողը նշեց նաև ուսման մեջ չառաջադիմող ու հետ մնացող աշակերտների անունները, նրանց վարքի դրսևորման, հերթապահության կատարման, ավագների աշխատանքի արդյունքները, տվեց դասարանի ծնողական և աշակերտական խորհուրդների աշխատանքի համառոտ ամփոփագիրը:

Որոշեցին՝

- Գնահատել դասղեկի և բոլոր ուսուցիչների կատարած աշխատանքը դասարանում 100 % առաջադիմություն ապահովելու համար:
- Ուժեղացնել դասարանի աշակերտների նկատմամբ հսկողությունը սովորելու հարցում ծնողների կողմից և ամեն գործում օգնել դասղեկին:
- Ավելի հաճախ լինել դպրոցում, կատարել դասալսումներ աշակերտների կարգապահությունը և վարքը բարձր մակարդակի վրա դնելու համար:

Լսեցին նաև ծնողների ելույթները.

1. Սոս Փանոսյանը խոսեց տղաների կարգապահության ու վարքի մասին և նշեց, որ նրանք վաղվա զինվորներն են ու ծառայելու են հայոց բանակում: Որքան բարձր լինի նրանց մակարդակը, այնքան հեշտ կլինի ծառայությունը, իսկ զինվորի առաջին քայլերն արվում ու սկսվում են դպրոցից:
2. Արտյոմ Ղարիբյանը հորդորեց բոլոր տղաներին օրինակ ծառայել դասա-

քանի աղջիկների համար իրենց վարքով և առաջադիմությամբ:

3. Հերիքնազ Հովհաննիսյանն ու Միլվա Առաքելյանը խորհուրդ տվեցին ուսման մեջ չառաջադիմող աշակերտներին հետևել լավ սովորողներին և հասնել նրանց:

4. Զինակոչիկի մայր Անժելա Հովհաննիսյանը իր և մյուս տղաներին կ մատնացույց արեց այս դպրոցի այն շրջանավարտների օրինակը, ովքեր պատվով են ծառայել ու բարձր պահել դպրոցի և ուսուցիչների պատիվը:

5. Ծնողխորհրդի նախագահ Տաթևիկ Բաբայանն առաջարկեց ուժեղացնել դասարանում կատարվող բոլոր աշխատանքների հսկողությունը ծնողների կողմից և ամեն հարցում հենարան լինել դասղեկին:

Որոշեցին՝

Ա. Հաճախակի լինել դպրոցում, կատարել դասալսումներ, հետևել և օգնել աշակերտներին ամեն հարցում:

Բ. Ստուգել երեխայի ամենօրյա դասապատրաստումները (տնային և գործնական աշխատանքների կատարում, օրագրի լրացում և այլն):

Գ. Ժամանակին կազմավորել նախազինակոչային տարիքի տղաների բոլոր փաստաթղթերը՝ համապատասխան տեղեր ներկայացնելու համար:

Քննարկվեցին նաև ընթացիկ հարցեր՝ կապված աշակերտների կուլտուրական մակարդակի բարձրացման, գիտելիքների զարգացման և այլ խնդիրների լուծման հետ (կոլեկտիվ կինոդիտում, այցելություն թանգարաններ ու թատրոններ, ներդպրոցական միջոցառումներ և այլն):

Բոլորն էլ հավաստեցին, որ սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում մեծ է ծնողների դերը երեխային ուսման մեջ աջակցելու և դպրոցից դուրս նրա օրվա մնացած ժամերի զբաղվածությունը ճիշտ կազմակերպելու հարցում, որովհետև նրանց ամենօրյա անմիջական հսկողությունից և ծնողական պարտքի զգացումից է կախված աշակերտի ուսման նկատմամբ պատասխանատվությունը, օրվա ռեժիմի ճիշտ կարգավորելը: Պետք է փորձել միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության և ուսման հիմնախնդիրների լուծման հարցում:

Այս տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքում ավելի շատ հայրերը պետք է հետաքրքրվեն ու զբաղվեն: Բացի դասապատրաստումից պետք է հետևել, որ երեխան կատարի լրացուցիչ հանձնարարություններ, զբաղվի հանրօգուտ աշխատանքով, գիրք կարդա և ժամանակ գտնի օգնելու ծնողին տնային գործերում, որովհետև ծնողի օրինակն է երեխայի համար դառնում չափանիշ:

Դասղեկը հորդորեց ծնողներին ճիշտ կազմակերպել երեխաների և՛ ազատ ժամանակի տնօրինումը, և՛ դասապատրաստման գործը. չէ որ այդ ամբողջ ժամանակահատվածում նրանք գտնվում են ծնողների կողքին ու նրանց հսկողության տակ:

Կարևոր է նաև երեխաների հաճախակի այցելությունը մշակութային օջախներ՝ կրթական մակարդակը բարձրացնելու և նոր մարդ ձևավորելու ընթացքը ճիշտ հիմքերի վրա դնելու համար:

Ելույթ ունեցան նաև աշակերտները և խոսեցին իրենց հուզող հարցերի մասին։

Վերջում ավագները բոլոր աշակերտների անունից խոստացան վերանայել իրենց գնահատականները, լինել կարգապահ և բարձր պահել դասղեկի ու ծնողների պատիվը։

Ժողովի նախագահ՝ ---------- Տ. Բաբայան

Քարտուղար ---------- Ս. Խաչիկյան